

Սերո Խանգաղյան

Գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս:
Պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի երկու և «Պատվո նշան» շքանշաններով, արժանացել է պետական մրցանակի, կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչումներին:



Ծնվել է 1915թ. Գորիսում: Մանկավարժական ուսումնարանն ավարտելուց հետո աշխատել է Տաթևի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Մինչ այդ դասավանդել է Գորիսի միլիցիայի դպրոցում: Այնուհետև տեղափոխվել և դասավանդել է Խնածախի դպրոցում:

Առաջին օրերից մասնակցել է պատերազմին՝ Վոլխովյան, Լենինգրադյան ճակատներում, Արևմտյան Պրուսիայում, մասնակցել Զյոնիսբերգի գրավմանը: Հասել է կապիտանի կոչման, եղել է ականանետային վաշտի հրամանատար: Պարգևատրվել է «Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճան», «Կարմիր աստղ» շքանշաններով և մարտական այլ մեդալներով:

Առաջին պատմվածքը՝ «Չոր տափը», լույս է տեսել 1934թ. Գորիսի «Կարմիր Չանգեզուր» թերթում: 1938թ. գրել է «Վահրամ Որոտնեցի» պատմական դրաման, որը բեմադրվել է 1940-ին: 1950թ. հրատարակել է «Մեր գնդի մարդիկ» վեպը: Խանգաղյանին ճանաչում է բերել «Հողը» (հ. 1-2, 1954-55թ.) վեպը: Այնուհետև լույս են տեսել «Լալ Համազը» (1955թ.), «Որոտանի կիրճում» (1956թ.), «Քարանձավի բնակիչները» (1961թ.) մանկական ստեղծագործությունները, «Կարմիր շուշաններ» (1958թ.), «Հարստությունը լեռներում» (1961թ.) պատմվածքների ժողովածուները: Հատկապես ժողովրդականություն են վայելում նրա «Մխիթար Սպարապետ» (1961թ.) և «Թագուհին հայոց» (1978թ.) պատմավեպերը:

Շատ երկեր թարգմանվել են: 1974թ. և ապա 1978թ. «Հայֆիլմ» և «Մոսֆիլմ» կինոստուդիաները էկրանավորել են «Այրված տուն» (վերանվանված «Լքված հեքիաթների կիրճ») և «Մխիթար Սպարապետ» երկերը:

Մահացել է 1998թ.:

